ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
СООБЩЕНИЯ И ЗАМЕТКИ

ԲՈԼԳԱՐ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ. Մ. ՋԱՆՓՈԼԱԴՅԱՆ

Վոլգա գետի միջին հոսանքում, Կազան քաղաքից հարավ գոյություն ունեցող հայկական հնությունների մասին հայտնի էր դեռևս XVIII դարում, երբ Միխայիլովի 1712 թ. պաշտոնական հաղորդումից, որը կազմված էր ռուսական Ուսպենսկի վանքի մայր եկեղեցու կառուցման կապակցությամբ, Միխայիլովը ուսումնասիրել և հաշվառել էր Վոլգայի ափին գտնվող միջնադարյան Բոլգար քաղաքի հնությունները։ Հիշյալ փաստաթղթում, մահմեդական հնություններից բացի, հիշատակվում են նաև քրիստոնեական-հայկական հուշարձաններ։

«Քաղաքի պարիսպներից դուրս,— ասված է այնտեղ,— Վոլգա գետի ուղղությամբ գտնվում է մի քառանկյունի սրահ, քանդված, առանց կամարների... երևում է, որ այդ սրահը նախկինում եկեղեցի է եղել, քանի որ նրա շուրջը կան մեծ թվով արձանագրություններ կրող դամբարաններ, իսկ այդ արձանագրությունները հիշեցնում են հայկական գրերը»[1]։ *Պետրոս I թագավորը, 1722 թ. Մեծ Բոլգար քաղաքն այցելելիս, հետաքրքրվում է նաև վերը հիշված քառանկյունի շինությամբ և նրա սկզբնական տեսքով։ Բավարար պատասխան չստանալով, թագավորը կարգադրում է հավաքել օտար լեզուներով (արաբատառ և հայերեն) բոլոր արձանագրությունները և դրանք ենթարկել գիտական ուսումնասիրության*[2]։

Այս կարգադրությունից հետո հիշյալ հնություններն արժանանում են ակադեմիական հիմնարկների ուշադրության։ Կայսերական գիտությունների ակադեմիան XVIII դարի ընթացքում մի քանի գիտարշավներ է ուղարկում այդ հնավայրն ուսումնասիրելու։

Հայկական արձանագրությունները գրված էին տապանաքարերի վրա. Սկզբնական շրջանում հայտնի էին միայն չորսը։ Այդ արձանագրություններն առաջինը ընթերցել է հայազգի Իվան Վասիլևը։ Նույն այս արձանագրությունները, ճշտելով և լրացնելով, հետագայում հրատարակում են Սեն-Մարտենը և Բրոսսեն։ Տապանաքարերի քայքայվածության և արձանագրությունների թերի լինելու պատճառով, հնարավոր է լինում վերականգնել միայն մի քանի անձնանուններ և տարեթվեր։ Համաձայն այդ արձանագրությունների, տապանաքարերը վերաբերում են XIII—XV դարերին։ Այս չորս քարերին հետագայում ավելանում են ևս երեքը՝ գտնված քաղաքի տարբեր վայրերում, որոնց վրայի արձանագրությունները, ցավոք, նույնպես շատ հակիրճ են և դժվար ընթեռնելի[3]։

---

[1] К. И. Новоструев, О городищах древнего Волжско-Болгарского и Казанского царства. «Труды I археол., съезда», т. I, М., 1869, т. II, М., 1871, *էջ 538։*

[2] С. М. Шпилевский, Древние города и другие булгаро-татарские памятники в Казанской губернии. Казань, 1877, *էջ 226։*

[3] Б. А. Миллер, Об армянских надписях в Болгарах и Казани. «Изв. Российск. акад. истории материальной культуры», т. IV, 1925, *էջ 67։*

1902 թ. Կազանի «Деятель» ամսագիրը հաղորդում է իր ընթերցողներին, որ Ուսպենսկի վանքի եկեղեցու պատերը որոշ տեղերում շարված են նախկին տապանաքարերով, որոնց վրա կան արաբական, թաթարական և հայկական արձանագրություններ։ Քիչ չեն շինարարության ժամանակ օգտագործված այդպիսի արձանագիր քարերը նաև տաճարի ներսում։ Լավ տաշված այդ սալերն օգտագործվել են վանքի հատակի, բեմի ու այլ հարդարանքների համար։

Բոլգար քաղաքի 1915 թ. պեղումների մասնակից Մ. Ռ. Խուդյակովը նույնպես հիշատակում է հայատառ տապանաքարերի կրկնակի օգտագործման փաստի մասին և անհանգստանում է, որ այդ քարերը տակավին չեն ուսումնասիրվել[4]։

Աղգագրական և գավառագիտական աշխատություններում ևս Վոլգայի ափին եղած մահմեդական հնություններից բացի, նշվում են հայկական հնությունները։

Բոլգար քաղաքի XIII դ. մի նկարագրության մեջ ասված է, որ «մեծ հողապատնեշից դուրս Վոլգայի ափին գտնվում է մի քառանիստ տաճար, սրա մասին թաթարական լեզվով եղած ավանդությունները պատմում են, որ այն հայկական եկեղեցի է եղել։ Այդ տաճարից ոչ հեռու, ճանապարհի վրա կա ևս մի շենք շատ ավերված վիճակում, որը եղել է հայկական մատուռ»։ Գոյություն ունեն մի քանի նկարագրություններ ևս, որոնք այս շենքն անվանում են «Հունական պալատ» (նկատի ունենալով, որ այստեղ գտնվել են սրբապատկերներ, խաչեր և քրիստոնեական եկեղեցու այլ պարագաներ) և նշում են, որ համաձայն հատակագծի, այս շենքը հավանաբար քրիստոնեական եկեղեցի է եղել։ Կ. Ի. Նովոստրուևը գրում է. «Քանի որ եկեղեցու շուրջը եղած արձանագրությունները հայերեն են, ապա եկեղեցին էլ եղել է, հավանաբար, հայկական և ոչ հունական»։

Ահա այսպիսի տեղեկություններ կային Վոլգայի միջին հոսանքում գտնվող Մեծ Բոլգար քաղաքի ավերակներում եղած հայկական հնությունների մասին, երբ 1916 թ. Կազանի «Հնագետների, պատմաբանների և ազգագրագետների ընկերությունը» Վ. Ֆ. Սմոլինի ղեկավարությամբ ձեռնարկեց, այսպես կոչված, «Հունական պալատի» պեղումները։ Պեղումները ցույց տվեցին, որ այդ քառանկյունի շենքն, իրոք, եղել է քրիստոնեական եկեղեցի։ Այդ մասին են վկայում շենքի հատակագիծը, նրա ներսում և շուրջը եղած դամբարանների դիրքավորումը արևելքից արևմուտք։ Բացվեցին նաև տաճարից դեպի Վոլգա գետն իջնող քարե աստիճանները։

Վ. Ֆ. Սմոլինի հետագա ուսումնասիրությունները նրան հանգեցրին մի շատ կարևոր եզրակացության, որի համաձայն եկեղեցու շուրջը, հավանաբար, եղել է քրիստոնյա բնակչության բնակավայր-քաղաքամերձ ավան, և քանի որ եղած արձանագրությունները հայկական են, ապա բնակչության հիմնական մասը, ըստ երևույթին, հայեր են եղել։

Այս բոլոր փաստերը մեծ հետաքրքրություն են առաջացնում գիտնականների շրջանում։ Խնդիր է դրվում պարզելու Վոլգայի ափին հայկական գաղութի գոյության փաստը, նրա ծագման, հարատևման ժամանակը և կատարած դերը հյուսիսային առևտրի մեջ[5]։

---

4 Նույն տեղում, էջ 73։

5 Л. П. Смирнов. Армянская колония города Болгар, М.—Л., 1958, էջ 333; «Материалы по исследованию археологии СССР» (հետագայում՝ МИА), вып. 61.

1925 թ. Բ. Ա. Միլլերը մի հնագիտական հոդված է գրում Բոլղար քաղաքում և Կազանում գտնված հայկական արձանագրությունների մասին, որտեղ մանրամասն քննարկելով հայկական հնությունների վերաբերյալ եղած բոլոր տեղեկությունները, առաջ է քաշում մի հետաքրքրական թեզ։ Այդ թեզի համաձայն, քանի որ մետաքսի առևտրի հյուսիսային ուղին գտնվում էր հայ վաճառականների ձեռքին, իսկ սրանք իրենց բնակավայրերը կամ առևտրական գաղութները, հավանաբար, հիմնում էին առևտրական ճանապարհների բանուկ կետերում, ապա հայկական հնությունների մնացորդները պետք է փնտրել Վոլգա—Կամա գետերի առևտրական մայրուղու երկարությամբ։ Նա միաժամանակ նշում է, որ այդ վայրերում մինչև հիմա շատ աղոտ ձևով պահպանված են երբեմնի հայկական բնակչության հետքերը։ Վյատկայի նավահանգիստներից մեկը կոչվում է «Армянская—Эрменская», չուվաշների լեզվով մետաքսը մինչև հիմա կոչվում է «ермен пурсан», այսինքն «հայկական մետաքս»[6]։

X—XIV դդ. Վոլգա գետի միջին հոսանքում ապրող բոլղարները մեծ դեր են խաղացել ժամանակի միջազգային կյանքում։ Դեռևս X դարում նրանց ստեղծած պետությունը Արևելյան Եվրոպայի առաջին պետական կազմավորումներից մեկն էր, որի մայրաքաղաք Բոլղարը հանդիսանում էր միջնադարյան Եվրոպայի կարևորագույն առևտրական քաղաքներից մեկը։ Արաբ պատմիչները խոսում էին նրա մասին որպես միջազգային նշանակություն ունեցող տոնավաճառի։

Բոլղար քաղաքի ավերակները գտնվում են Թաթարական ԻՍՍՀ Կույբիշևի մարզում, Վոլգա գետի բարձրադիր ափին։ Այս հնավայրի սիստեմատիկ պեղումներն սկսվել են 1938 թ., Վոլգա գետի ափին Կույբիշևյան մեծ էլեկտրակայանի կառուցման աշխատանքների կապակցությամբ և որոշ ընդմիջումներով շարունակվում են մինչև այսօր։ Պեղումները վարում է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հնագիտության ինստիտուտի արշավախումբը՝ պրոֆ. Ա. Պ. Սմիրնովի ղեկավարությամբ[7]։

Երկարամյա և գիտական բարձր կազմակերպվածությամբ տարվող աշխատանքների շնորհիվ հնարավոր եղավ վերականգնել Վոլգա գետի ափին ապրող ժողովուրդների պատմության տարբեր փուլերը՝ սկսած հնագույն ժամանակներից, հետազոտել նրանց կյանքի պատմական ընթացքը։ Այդ պեղումները հնարավորություն տվեցին բացել մի էջ նաև հայ ժողովրդի դաղթօջախների պատմությունից։

1946—1947 թթ. արշավախմբի նպատակներից մեկն էր Բոլղար քաղաքի պարիսպներից դուրս գտնվող «Հունական պալատ» կոչված հայկական եկեղեցու հատակագծի վերջնական պարզաբանումը և նրա շուրջը եղած տարածության պատմա-հնագիտական ուսումնասիրությունը։

Տաճարից արևմուտք ընկած հողերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ողջ այդ տարածությունը, գետի բարձր ափի ուղղությամբ, հնում բնակեցված է եղել։ Հնագույն շինքերի հետքերը ձգված են երեք կիլոմետրից ավելի երկարությամբ։ Այդ շենքերը հիմնականում կառուցված են եղել սպիտակ քարից։

6 Б. А. Миллер, նշվ. աշխ., էջ 79։

7 А. П. Смирнов, Волжские булгары. «Труды Гос. историч. музея», вып. 19; А. П. Смирнов и Н. Я. Мерперт, МИА, вып. 42, էջ 5—20։

Համաձայն հնագիտական նյութերի տվյալների, այստեղ բնակության հնագույն փաստը X դարից է և հասնում է մինչև XV դարի առաջին կեսը[8]։ Ինչպես կարծում են ուսումնասիրողները, հավանական է, որ հենց այդ ժամանակներից այստեղ բնակություն են հաստատել հայերը և հատկապես հայ վաճառականները։

Բոլգար քաղաքի հետ հայերի ունեցած առևտրական կապերի մասին գրավոր տեղեկությունները վերաբերում են X դարին։

922 թ. արաբ Խալիֆ Մուկադադդիրը դիվանագիտական պատգամավորություն է ուղարկում բոլգարների թագավոր Այմուշի մոտ, վերջինիս մահմեդականություն ընդունելու առթիվ։ Այդ մասին մանրամասն տեղեկություններ է պահպանել պատգամավորության մասնակից Ահմեդ Իբն Ֆադլանը։ Նկարագրելով բոլգարների կյանքն ու կենցաղը, Ֆադլանը գրում է, որ նրանք բոլորն էլ ապրում էին վրաններում, այն տարբերությամբ միայն, որ թագավորի վրանը շատ ընդարձակ էր և կեսից ավելին ծածկված հայկական գորգերով։ Այս փաստով Իբն Ֆադլանը ցանկացել է նշել բոլգարների թագավորի հարստությունը և նրա բնակարանի շքեղությունը, քանի որ նրան շատ լավ հայտնի էին հայկական գորգերի մեծ համբավն ու արժեքը, որոնք այդ ժամանակ արդեն հռչակված էին և գնահատվում էին շատ թանկ ու մատչելի էին միայն մեծահարուստ անձանց։ Մեզ համար տվյալ տեղեկությունը հետաքրքրական է որպես X դարում գոյություն ունեցած հայ-բոլգարական առևտրական հարաբերությունների մասին վկայող փաստ։

Հնագիտական պեղումներից ստացված տվյալները և վերը նշված տեղեկությունը մեզ բերում է այն եզրակացության, որ X դարում հայ-բոլգարական առևտրական կապերը պատահական, միջադեպային բնույթ չէին կրում։ Շատ հավանական է, որ այդ ժամանակ հայ վաճառականներից ոմանք իրենց ունեցած աշխույժ առևտրական կապերի պատճառով արդեն մշտական բնակություն էին հաստատել Վոլգայի ափերին։

Միջնադարում, ինչպես հայտնի է ժամանակակիցների տեղեկություններից, օտար առևտրականներն իրենց քարավաններով իրավունք չունեին իջևանել և ապրել քաղաքի պարսպապատված մասում։ Համաձայն ընդունված կարգի, նրանք իջևանում էին պարսպից դուրս։ Եթե վաճառականներն այդ երկրի հետ ունեին մշտական կապեր, ապա նրանք իջևանում էին նախօրոք հատկացված վայրերում, ավաններում կամ արվարձաններում։ Առևտրականներից ոմանք այդ վայրերում հիմնում էին իրենց հենակետերը, քարավանատները, պահեստային շենքերը։ Նրանցից ոմանք աստիճանաբար մշտական բնակություն էին հաստատում, և ժամանակի ընթացքում այդ ավանները ընդարձակվելով վերածվում էին ազգային գաղութների։ Ամենայն հավանականությամբ այս կերպ է ստեղծվել նաև Վոլգա գետի ափի հայկական գաղութը, որը սկզբնական շրջանում (ոչ ուշ քան X դ.) եղել է փոքր առևտրական ավան Բոլ-

---

[8] А. М. Ефимова, О. С. Хованская, Н. Ф. Калинин, А. П. Смирнов, Раскопки развалин Великих Болгар в 1946 г. «Краткие сообщ. инст. материальн. культуры» (այսուհետև՝ КСИИМК), вып. 21, 1947, էջ 102—111։

[9] А. П. Ковалевский, Книга Ахмеда Ибн-Фадлана и его путешествие на Волгу в 921—922 гг., Харьков, 1956, էջ 137։

կար քաղաքի պարիսպներից դուրս։ Ժամանակի ընթացքում, առևտրի աշխուժացման հետևանքով այն ընդարձակվել է և XIII—XIV դդ. դարձել քաղաքի կարևոր արվարձաններից մեկը։ Նրա կենտրոնում կառուցվել է եկեղեցի, որի շուրջն էին հավաքվում ոչ միայն հայերը, այլև բոլղարների մայրաքաղաքում ապրող այլազգի քրիստոնյաները։

Հնագիտական արշավախմբի աշխատանքների արդյունքների մանրազնին ուսումնասիրության շնորհիվ, աշխատանքների ղեկավար Ա. Պ. Սմիրնովին և մինչ այդ պեղումներ կատարող ճարտարապետ Վ. Ֆ. Սմոլինին հաջողվել է պարզել, այսպես կոչված, «Հունական պալատի», իրականում՝ հայկական եկեղեցու դիրքը, ճարտարապետական ոճը, շինարարական այլ մանրամասները[10]։

Տաճարը, որը հավանաբար գտնվում էր ավանի կենտրոնում, ունեցել է քառանկյունի հատակագիծ՝ 16,4 մ երկարությամբ և 12,6 մ լայնությամբ, արևելքից արևմուտք դիրքավորումով։ Մուտքը տեղավորված է եղել արևմտյան կողմում։ Հարավային և հյուսիսային պատերն ունեցել են քառանկյունի որմնասյուներ։ Եկեղեցին կառուցված է եղել XIII—XIV դդ. և կրկնել է XII—XIII դդ. Հայաստանում իր կատարելիությանը հասած երկհարկանի եկեղեցի-դամբարանների (Նոր Հետիկի գրատուն-ժամատունը, Եղվարդի ժամատունը և Հուրթել Օրբելյանի Նորավանքում կառուցած Աստվածածին եկեղեցին) ճարտարապետությունը։

Եկեղեցու առաջին հարկը ծառայել է որպես տապանատուն։ Հետաքրքրական է, որ այս տիպի եկեղեցիներ կառուցվել են նաև հայկական ուրիշ գաղթավայրերում (Թեոդոսիա, Հին-Ղրիմ և այլն)։

Հուշարձանի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պարզել նաև մի հետաքրքրական փաստ։ Տաճարի շինարարությանը տեղական վարպետների հետ միասին, հավանաբար, մասնակցել են նաև Հայաստանից եկած վարպետներ։ Այդ մասին են վկայում շարվածքի ձևը, շինանյութերի պատրաստման եղանակը[11]։

Սակայն մինչ տվյալ եկեղեցու կառուցումը, հայկական գաղութը հավանորեն ունեցել է մի այլ, ավելի փոքր և անշուք եկեղեցի։ Այդ են վկայում պարիսպից դուրս եղած հայկական մատուռի հիմքի հետքերը։ Մատուռ կոչված այդ շենքը կարող էր լինել հայկական գաղութի սկզբնական շրջանում կառուցված եկեղեցին, որը գաղութի աճելուց հետո, նրա տնտեսական հզորացման (XIII—XIV դդ.) հետ փոխարինվել է ավելի մեծ և շքեղ եկեղեցիով։ Բոլգար քաղաքի պեղումների հետևանքով բացված մի շարք քաղաքացիական շենքերի ճարտարապետական ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ հայկական ճարտարապետության ազդեցությունը այդ քաղաքում դուրս է եկել ազգային սահմաններից։ Այդ մասին են խոսում քաղաքում կառուցված բաղնիքները, որոնք հիմնականում կրկնում են հայկական բաղնիքների ճարտարապետական և կառուցողական ոճը[12]։

Մեզ համար առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում եկեղեցու ներքնահարկի և նրա շուրջը եղած 113 դամբարանների պեղումների արդյունքները։

---

10 А. П. Смирнов, Армянская колония города Болгар, էջ 338, 342։
11 Նույն տեղում, էջ 343։
12 О. С. Хованская, Бани города Болгар, МИА, вып. 42, էջ 422։

Դամբարաններն իրենցից ներկայացնում են արևելքից արևմուտք դիրքավորված քառանկյունի ոչ շատ խոր փոսեր, որտեղ պահպանվել են փոշիացած փայտե դագաղների հետքեր և գամեր։ Դամբարաններում գտնված դանգերի մարդաբանական ուսումնասիրությունից, որը կատարել է պրոֆ. Գ. Ֆ. Դեբեցը, պարզվում է, որ նոանց մեծագույն մասը պատկանել է տիպիկ արմենոիդ դանգերի խմբին, սակայն այնտեղ թաղվել են նաև այլազգի քրիստոնյաներ[13]։

Չնայած դամբարաններում գտնված իրերի սակավությանը (քրիստոնեական եկեղեցին արգելում էր իրեր թաղել հանգուցյալի հետ), պահպանված թանկարժեք գործվածքների մնացորդները և ոսկե ու արծաթե զարդերի գոյությունը ուսումնասիրողներին հնարավորություն են տվել եզրակացնել, որ այս դամբարաններում, հավանաբար, թաղված են եղել ունևոր մարդիկ։ Դամբարաններից ինների մեջ հայտնաբերվել են դիպակի, մետաքսե բանվածքների, ոսկե և արծաթե թելերով հյուսված կերպասների և գորգի մնացորդներ։ Չնայած փոքր քանակին և քայքայված վիճակին, այս հազվագյուտ հնագիտական նյութերը գիտական կարևոր նշանակություն ունեն։ Գործվածքների նյութը, հյուսման եղանակը, նախշերի գեղարվեստական ոճը և այլ մանրամասնություններ հիմք են տալիս արհեստների, արվեստի և առևտրական հարաբերությունների մի շարք խնդիրների լուսաբանման համար։ Հրապարակելով այդ արժեքավոր նյութերը, հնագետները և գործվածքների տեխնոլոգիայի պատմության մասնագետները իրենց աշխատություններում նշում են այս գործվածքների մի մասի ոչ տեղական ծագումը։

Նկ. 1։

Ա. Պ. Սմիրնովը, քննարկելով դամբարաններից մեկում գտնված գործվածքի այն կտորը, որի վրա ձեռագործված են երկու պարող մարդ, նշում է նրանց հնարավոր կովկասյան, կամ նույնիսկ հայկական ծագումը (նկ. 1)։ Այդ եզրակացության է հանգեցրել նրան այս պատկերի հատկապես արվեստաբանական համեմատությունը հայկական զարդարվեստի մի քանի օրինակների հետ։ Այսպես, նա տղամարդու գլխարկի մոտակա զուգահեռն է տեսնում Հաղբատի վանքի իշխան Խութլու Բուղային պատկերող որմնանկարի վրա[14]։ Այդ պարի ողջ տեսարանի համար շատ ավելի

13 А. П. Смирнов, Армянская колония города Болгар, էջ 343։
14 Նույն տեղում, էջ 353։

մոտակա զուգահեռ է Դվինի դաջազարդ կարասներից մեկի գոտու պարի տեսարանը, ուր մեծ նմանություն կա թե՛ պատկերի ընդհանուր կառուցվածքի, և թե՛ պարող մարդկանց հագուստի մանրամասների մեջ[15]։

Գտնված բոլոր պատառիկներից Ս. Ս. Վիդոնովային հաջողվել է պարզել մի այն N 102 դամբարանից հանված մետաքսե, ոսկե թելերով զարդարված շղարշի գործածման նպատակը՝ այն հավանաբար եղել է գլխի ծածկոց[16]։ Այս շղարշը և այլ դամբարաններից գտնված որոշ ձեռագործներ մեզ հիշեցնում են մեծահարուստ անեցի Տիգրան Հոնենցի տոհմական գերեզմանոցի մի դամբարանում գտնված ձեռագործ զարդերով գլխաշորը։

Այս գերեզմանը, որը պեղված է 1908 թ. Անի քաղաքի Ծաղկոցաձորի ժայռակոփ դամբարաններից մեկում, հավանաբար պատկանել է 6—7 տարեկան աղջնակի։ Դամբարանի և շրջակա օդի չորության պատճառով հազվադեպ լավ են պահպանվել ինչպես դիակը, այնպես էլ հագուստները[17]։ Աղջնակի հագուստը կարված է բաց սրճագույն նուրբ մետաքսից, որը լրացուցիչ գործված է կարմիր մետաքսե թելերով։ Զգեստը ունի պարզ ձև. կրծքի մոտ կտրվածք,



Նկ. 2։

լայնացող քղանցք, օձիքը կարդարված է վեց թերթանոց վարդյակներով։ Թևվերն ունեն հատուկ գործված բաղկակալներ, իսկ արմունկից վեր դրված են հատուկ ոսկեկար ժապավեններ, որոնք աղջնակի ազնվական ծագման նշան են համարվում։ Աղջկա կրծքին, զգեստի տակից, դրված է եղել ոսկեթել երկար ժապավեն, իսկ գլխի տակ՝ մետաքսե գործվածք, որը զարդարված է սավառնող

15 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, նկ. 170։

16 Е. С. Видонова, Ткани и шитье XIV в. из раскопок в Болгарах, КСИИМК. вып. 21, էջ 112—117։

17 И. Орбели, Каталог аннийского музея древностей, вып. I, СПб, 1910, էջ 137։

թռչունների պատկերներով։ Աղչկա գլուխը ծածկված է ոսկեզօծ թելերով հյուսված թափանցիկ շղարշով։ Շղարշի ձեռագործի մասում, բուսաղարդ ֆոնի վրա պատկերված են երկու դեմ-դիմաց կանգնած կենդանիներ, որոնցից մեկը հավանաբար վագր է, մյուսը՝ աւյուծ։ Դաղանները պատկերված են մեծ վարպետությամբ. արտահայտված են դեմքի և մարմնի բոլոր մանրամասնությունները։ Ոսկե և արծաթե թելերի հաջորդաբար օգտագործումը պատկերին տալիս է բնորոշ արտահայտություն (նկ. 2)։ Օձիքի վարդյակները և վզին գցված շղթան ձեռագործված են նույն ոճով։

Բոլգար քաղաքի հայկական գերեզմանոցի № 97 դամբարանում գտնված մետաքսե երկու պատառիկների վրա, որոնք հավանաբար նույնպես գլխաշորի մնացորդներ են, մենք հանդիպում ենք մի ձեռագործ պատկերի, շատ նման Անիի զույգ գաղանների պատկերին (նկ. 3)։ Թեև Վոլգայի ափին գտնված



Նկ. 3։

գործվածքի ձեռագործը մի քիչ ավելի կոպիտ է, քան Անիինը, բայց դրանք գաղանների պատկերման մեջ ունեն շատ ընդհանուր գծեր (մեծ գլուխ, տափակ դունչ, ճիրանները դուրս ցցված թաթեր)։ Ձեռագործը բանված է մետաղյա և մետաքսի թելերի բարձրադիր կարի եղանակով։ Հավանաբար գլխաշորի մնացորդներ էին նաև հայկական գաղութի №№ 7, 15, 43 և 94 դամբարաններում գտնված մետաքսի մնացորդները։ Միանման ձեռագործով գլխի շղարշի գոյությունը Վոլգայի ափին ապրող կանանց և անեցի աղջկա դամբարանում՝ կարող է ազգային սովորության մի արտահայտությունը լինել։

Հ. Օրբելին Անիի թանգարանի ցուցակում նկարագրում է մի գործվածք՝ գտնված Տիգրան Հոնենցի տոհմական գերեզմանոցի մի այլ դամբարանում։ Նա նշում է, որ այդ դամբարանը բացելիս դիակի վրա գտնվել են մեծ քանակությամբ խճճված թելեր։ Սկզբում թվացել է, թե այդ թելերով փաթաթված է եղել դիակը, բայց մաքրելուց հետո պարզվել է, որ դա մանիշակագույն գործ-

վածքի քանդված թելերն են։ Սման պատկերի ենք հանդիպում նաև Վոլգայի ափի N 25 դամբարանում։ Այստեղ էլ չի պահպանվել հիմնական կտորը, որի մեջ, հավանաբար, փաթաթված կամ որով ծածկված է եղել դիակը, մնացել են միայն մետաքսե թելերը[18]։ Հագուստի ևս մի մաս իր զուգահեռն ունի մեր ուսումնասիրած երկու դամբարաններում. դա ոսկեկար ժապավեններն են, որ անեցի աղջնակի զգեստին դրված են թևերի վրա, իսկ Բոլգար քաղաքի դամբարանում՝ հագուստի քղանցքին։

Ինչպես ցույց է տալիս անեցի աղջկա հագուստների և Վոլգայի ափին ապրող հայուհիների դամբարաններում գտնված գործվածքների պատմա-արվեստագիտական ուսումնասիրությունը, դրանք ամենայն հավանականությամբ հայկական ծագում ունեն և հանդիսանում են հայկական մանվածագործության հաղվագյուտ նմուշներ[19]։

Այս նմանությունները հավանաբար հետևանք են այն սերտ կապերի, որ գոյություն են ունեցել հնռավոր հայկական այդ գաղութի և մայր հայրենիքի միջև։ Տասնյակ տարիների ընթացքում ապրանքների հակերով ծանրաբեռնված առևտրական քարավանները Անիից, Դվինից և հայկական մյուս վաճառաշահ քաղաքներից երկար ճանապարհ կտրելով, Կասպից ծովի ափերով հասնում էին Արևելյան Եվրոպայի տափաստաններն ու Վոլգա գետի ափերը և իրենց հանգրվանն էին գտնում Բոլգար քաղաքի հայկական գաղութում։

Ուսումնասիրելով Բոլգար քաղաքի հայկական գաղութի դամբարանների պեղածո առարկաները, Ա. Պ. Սմիրնովը հանգել է այն կարծիքին, որ այնտեղ, ըստ երևույթին, թաղված են եղել վաճառականներ, որոնք զբաղվում էին միջազգային առևտրով[20]։

Գուցե պատահական չեն Վոլգա գետի ափին ապրող հայ առևտրականների և Տիգրան Հոնենցի ընտանիքի անդամներից մեկի հագուստների զուգադիպությունները։ Տիգրան Հոնենցը Անիի XIII դ. առաջին կեսի մեծահարուստ քաղաքացիներից մեկն էր։ Հոնենցի ունեցած հարստության մասին մենք պատկերացում ենք ստանում այն արձանագրությունից, որը քանդակված է իր խսկ հրամանով Անիի Սբ. Գրիգոր եկեղեցու պատին, եկեղեցու կառուցման և վերջինիս տրված նվերների կապակցությամբ[21]։ Այստեղ թվարկված հողերի, գյուղերի, այգիների, հյուրանոցների, քարավանատների, խանութների և կանխիկ դրամի քանակով դժվար չէ եզրակացնել, թե ինչ հսկայական հարստության տեր է եղել նվիրատուն։

Շատ հավանական է, որ Տիգրան Հոնենցը պատկանում էր այն վաճառականների թվին, որոնք իրենց քարավաններն էին ուղարկում Միջին Ասիա, Ռուսաստան և Վոլգայի ափերը։

Բոլգար քաղաքի հայկական գաղութի ազգային համալրման աղբյուրներից մեկը եղել է արտագաղթը, որը սկսվել էր Հայաստանում և սաստկացել հատկապես XI դարի երկրորդ կեսից։ Պատմական փաստերին ավելի հարազատ է գոյություն ունեցող այն տեսակետը, որ ինչպես Անի քաղաքի, այնպես

18 Նույն տեղում, էջ 39։

19 Р. М. Джанполадян, О двух тканях из Ани и Болгар. «Краткие сообщ. Инст. археологии», вып. 132.

20 А. П. Смирнов, Армянская колония города Болгар, էջ 350.

21 «Դիվան հայ վիմագրության», Անի քաղաք, Երևան, 1966, էջ 63։

էլ, հավանաբար, Հայաստանի այլ շրջանների ու քաղաքների բնակիչները թողել են իրենց բնակավայրերը և հեռացել ոչ թե զանգվածային արտագաղթի միջոցով, այլ մաս-մաս, մի շարք տասնամյակների ընթացքում[22]։

Արտագաղթող այդ ընտանիքները բնակություն են հաստատել ոչ թե իրենց համար անծանոթ նոր վայրերում, այլ այն տեղերում, որտեղ վաղօրոք գոյություն ունեին հայկական գաղթօջախներ։ Իսկ դրանք մեծ մասամբ հանդիսանում էին այն առևտրական կետերը, որտեղ ժամանակի ընթացքում իրենց հենարաններն էին ստեղծել և այդ բնակություն հաստատել հայ վաճառականներն ընտանիքներով։

Բոլգար քաղաքի հայկական գաղութը հանդիսացել է այդպիսի օջախներից մեկը, որը ստեղծվել էր X դարում, որպես մի փոքր առևտրական ավան, վաճառաշահ քաղաքի պարիսպներից դուրս։ Աստիճանաբար, արևելքի և արևմուտքի միջև ընկած առևտրական ճանապարհների մայրուղու դեպի Վոլգա կետը և Արևմտյան Եվրոպայի տափաստանները տեղափոխվելու կապակցությամբ, սկսում է հզորանալ այդ ճանապարհների խաչմերուկում գտնվող Բոլգար քաղաքը, բարգավաճում և ընդարձակվում է նաև հայկական գաղութը։

Բոլգար քաղաքի առևտրականները դառնում են միջազգային տարանցիկ առևտրի միջնորդները և իրենց մենաշնորհն են դարձնում հյուսիսային ժողովուրդների հետ կատարվող թանկարժեք մորթիների շահավետ ողջ առևտուրը։ Շատ հավանական է, որ այդ առևտրականների թվում կային նաև հայազգի վաճառականներ։ Այդ հարցի վերջնական պատասխանը կտան միայն հետագա ուսումնասիրությունները։ Մինչ այդ, սակայն, այստեղ անհարկի չենք համարում հիշատակելու այն փաստը, որ հեռավոր հյուսիսում, մերձբևեռային Ուրալում, Տյումենի մարզի Մալայա Տինագոտա գետի ափին 1969 թ. գտնված է մի թուր, որը մասնագետների կողմից թվագրվում է XII—XIII դարերով։ Թրի վրա եղած հայերեն արձանագրությունը հաղորդում է, որ այն պատրաստել է վարպետ Խաչատուրը[23]։

Բոլգար քաղաքի հայկական գաղութն իր բարգավաճման շրջանն է ապրել հատկապես XIII—XIV դդ.։ 1431 թ. Ոսկե Հորդայի խան Բուշակ Թիմարի կողմից Բոլգար քաղաքի ավերման ժամանակ, հավանաբար, հատկապես ուժեղ հարված է ստացել քաղաքի պարիսպներից դուրս գտնվող հայկական գաղութը, որի բնակչությունը հեռացել է այստեղից և բնակություն հաստատել նոր հզորացող Կազան քաղաքում[24]։

---

22 Լ. Խաչիկյան, էջեր համշենահայ պատմությունից, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 2, էջ 119, ծան. 12։

23 Р. М. Джанполадян, Л. И. Кирпичникова, Средневековая сабля с армянской надписью, найденная в приполярном Урале, «Эпиграфика Востока», вып. 22.

24 А. П. Смирнов, Армянская колония города Болгар, էջ 343։